

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 24-ի թիվ 711-Ն որոշմամբ հատկացված միջոցներով կառուցված և հիմնանորոգված օբյեկտների ավարտված շինարարական աշխատանքներն ընդունելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

- | | |
|-------------------|---|
| Հակոբյան Անդրանիկ | - մարզպետի տեղակալ, նախագահ |
| Զոհրաբյան Արմեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ |
| Խաչատրյան Գևորգ | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ |
| Մելքոնյան Գուրգեն | - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ |

Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել ՀՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության Գեղարքունիքի տարածքային բաժնի, համապատասխան օբյեկտների տեխնիկական և հեղինակային հսկողություն իրականացնող, կապալառու և այլ շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2. Հանձնաժողովին՝ ավարտված շինարարական օբյեկտները շահագործման ընդունող հանձնաժողովի կողմից կազմված ակտերը ներկայացնել մարզպետի հաստատմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ